



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Ltn  
1805

N.Y.

1999



43989-4. L.

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ  
Հ Բ Ա Հ Ա Ն Գ  
Գ.Ա.Ի.Ա.Ռ.Ա.Ց ՀԱՄԱՐ

Վ Ա Խ Ե Ր Ա Յ Ա Լ

Ի ԿՐՈՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱՆԻ

ԽԱՌՆ ԺՈՂՈՎԸՑ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵՐՆ



Ի ՏՊՈՐԱՆԻ Օ · ԽԾԶՈ.ԱԱ.ՐԵԱՆ

= 1872 =

23005-62

## ՅԱՌԱՋԱԲԱՆ

Թաէ ինչպէս կը կազմուին դաւառա  
կան ընդհանուր ժողովները, դաւառա  
կան վարչութեան կրօնական և Քաղա-  
քական ժողովները, և ինչ է անոնց պաշ-  
տօնը. Ինչպէս կ'ընտրուի Առաջնորդը  
և ինչ է անոր պաշտօնն ու պարտիքը,  
և այլն. սոյն տրամադրութիւնները կը  
պարունակին Ազգային Սահմանադրու-  
թեան մէջ։ Բայց ըստ որո՞մ Սահմա-  
նադրութիւնը կեդրօնական վարչու-  
թեան մասը գծած է, և դաւառական  
վարչութեան համար տրամադրած է  
լինել յար և նման կեդրանական վար-

1805-Ն

29 1911

Զ

չութեան . ուստի կեդ ըոնական վարչութեան կրօնական և քաղաքական խառն ժողովը պատշաճ դատեց , Սահմանադրութեան հետեւելով , և կեդ ըոնական վարչութեան վերաբերեալ մասերը ի բայց թողով , գաւառաց համար սոյն Սահմանադրութեան Հրահանգը պատրաստել . որպէս զի Սահմանադրութեան գործադրութիւնը գիւրանայ գաւառացի աղդայնոց :

Այս Սահմանադրութեան Հրահանգին այն մասերը , որ Սահմանադրութեան տրամադրութեանց հետեւութիւնն են , կեդ ըոնական վարչութեան խառն ժողովը փորձառութեամբ պիտի վերաքննէ , երբ հարկը պահանջէ , և երբ այս փորձառութեան արդեանց գաւառական վարչութիւնք ևս մտադիր լինելով՝ առաջարկեն զայն կեդ ըոնական վարչութեան . և վերաքննեալ մասերը դարձեալ պիտի հրատարակէ : Բայց մինչեւ որ կեդ ըոնական վարչութիւնը սոյն Հրահանգին ամբողջին , կամ յաւելեալ և կամ յազդաւեալ մասանց նորոգ հրատարակութիւն չընէ , սոյն Հրահանգը ամբողջ պիտի գործադրուի , հրատարա-

Է

կութեան թուականէս սկսեալ , և իւրաքանչիւր Առաջնորդ և Գաւառական վարչութիւն պարտաւոր են ըստ այնմ վարուելու :

14 Սեպտեմբեր 1872 .

Ի Պատրիարքարանի Հայոց

Ի Կ . Պօլիս

ՆԱԽԱԴԱՀ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ՊԱՏՐԻԱՐՔ Կ . ՊՈԼՍՈՅ

ՄԿՐՏԻՉ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԽՐԻՄԵԱՆ

ԴԻՄԵԱՆ ԿՐԺԱԿԱՆ ԺՈՂՈՎ

ԱՏԵՆԱԴՊԻՐ

ԱՏԵՆԱՊԵՏ

Մ . Վ . ԻԶՄԻՐԼԵԱՆ ԹԱԴԵՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ԴԻՄԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ

ԱՏԵՆԱԴՊԻՐ

ԱՏԵՆԱՊԵՏ

Մ . Պ . Պ . ՓՈՓԱԶԵԱՆՑ

ՍԵՆԵՔԵՐԻՄ

Մ . ՄԱՆՈՒԿԵԱՆ



ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ

Հ Պ Ա Հ Ա Վ Գ

Գ Ա Խ Ա Ռ Ա Ճ Հ Ա Մ Ա Ր



Ա.

Բ Ե Տ Ծ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

Գ Ա Խ Ա Ռ Ա Կ Ա Ն Ը Ն Դ Հ Ա Խ Ո Ւ Ի Ր Ճ Ա Ղ Ո Վ Ո Յ

1° Ամեն Առաջնորդական վիճակ իւր  
գաւառական ընդհանուր ժողովը պիտի  
ունենայ , Աահմանադրութեան համե-  
մատ :

2° Գաւառական ընդհանուր ժողովոյ  
անդամոց թիւը 21 էն մինչև 70 կրնայ  
ըլլալ , այսինքն 24, 28, 35, 42, 49, 56,  
63, 70 :

3° Իւրաքանչիւր Առաջնորդական վի-  
ճակ իւր ընդհանուր ժողովոյ անդամոց  
թիւը իւր բնակչաց թուղն համեմատ

ինք կ'որոշէ , և կեղրոնական վարչութիւնն ալ կը հաստատէ :

4° Պաւառական Ծնդհանուր ժողովից անդամոց 4/7ը եկեղեցական գասէն , 2/7ը թեմերէն , և 4/7ը առաջնորդանիստ քաղաքէն և կէս (1) պւուր միջոց հեռաւորութիւն ունեցող տեղերէն կ'ընարուին :

Եթէ թիւը 21 է , 3 ը եկեղեցական պիտի ըլլայ , 6 ը թեմական և 12 ը առաջնորդանիստ քաղաքէն :

Եթէ թիւը 28 է , 4 ը եկեղեցական , 8 ը թեմական , 16 ը առաջնորդանիստ քաղաքէն :

Եթէ թիւը 35 է , 5 ը եկեղեցական , 10 ը թեմական , 20 ը առաջնորդանիստ քաղաքէն :

Եթէ թիւը 42 է , 6 ը եկեղեցական , 12 ը թեմական , 24 ը առաջնորդանիստ քաղաքէն :

Եթէ թիւը 49 է , 7 ը եկեղեցական , 14 ը թեմական , 28 ը առաջնորդանիստ քաղաքէն :

Եւսցին :

5° Առաջնորդական վիճակին մէջ դանուող այն ամեն ազգայինք՝ որ կառավարութեան տուրք կը վճարեն և 23 ապրիլն ըրացուցած են , ընդու ըլլալու իրաւունք ունին :

(1) Կէս պւուր միջոցը՝ ձխոք երեք ժամանակաց կը հաշուալիք :

6° Ընդու են այն ամեն ազգայինք՝ որ 30 տարիքն ըրացուցած են , առաջնորդանիստ քաղաքին մէջ կամ անկէ կէս աւուր միջոց հեռաւորութիւն ունեցող տեղ մը կը բնակին , որ ժողովի օրերը դիւրութիւն ունին ներկայ գլունուելու , կարդալ զրել գիտեն , և նոյն գաւառին ազգային գործոց հմուտ անձինք են :

7° Այն անձինքը՝ որոնց յիմար ըլլալը ծանուցուած է . և կամ Ազգին ու կառավարութեան գործոց մէջ քրէական յանցանք գործած և գատապարատութիւն կրած են , ոչ ընդու կը նան ըլլալ և ոչ ընդու :

8° Առաջնորդը կամ առաջնորդական փոխանորդը և կամ առաջնորդական ջեղապահը նախ և յառաջ գործագիր յանձնաժողով մը կը կազմէ (1) , որ ընտրութեան գործողութիւնները կատարել տայ ,

(1) Եթէ գաւառի մը մէջ ըստ օրինի կաղմեալ Քաղաքական ժողով կայ , և Ծնդհանուր ժողովոց բոլոր անդամք կամ ոմանք հրաժարեալ են , ու անոնց տեղ նարու ընտրութիւն պիտի ըլլայ , ան ատենց ընտրական գործողութեանց հսկելու ալաշտօնը Քաղաքաւ

և հսկէ անոնց վրայ . այս Յանձնաժողովը  
Յ էն մինչեւ 7 անձինքէ կրնայ բաղկա-  
նալ : Առաջնորդը կամ Փոխանորդը  
կ'անուանէ այս Յանձնաժողովոյ անդամ՝  
Ները՝ Խորհրդակցութեամբ առաջնորդա-  
նիստ քաղաքին մէջ գտնուող ազգային  
Ժողովին , որուն հետո որ Առաջնորդը կը<sup>1</sup>  
տնօրինէ վիճակին գործերը :

Ընդունիւն  
Եկեղեցական անդամոց

9. Եկեղեցական անդամ կրնան ըլլալ  
նոյն վիճակին մէջ գտնուող եպիսկոպոս ,  
վարդապետ և քահանայ , վանահայ-  
րերը և վանական վարդապետք , որսնք  
Եկեղեցական պաշտօն վարելէ ըստ օրի-  
նի գալարեալ չեն :

10. Առաջնորդը կամ Փոխանորդը  
քաղաքին և մինչեւ կէս աւուր միջոց հե-  
ռաւորութիւն ունեցող տեղերուն մէջ  
գտնուող Եկեղեցականները իր քոյլ ժո-  
ղովի կը հրաւիրէ , որ քուէարկութեամբ

կան ժողովին է , կամ անկէ ընտրեալ Գոր-  
ծադիր յանձնաժողովի մը :

Եկեղեցական անդամոց ընտրութիւնը  
կատարեն :

Սոյն ժողովին ներկայ գտնուիլ չկը-  
ցող Եկեղեցականք իրենց քուէն նամա-  
կաւ կրնան զրկել առ Առաջնորդն կամ  
Փոխանորդն :

Վիճակին մէջ գտնուող Վանահարք  
ալ իրենց միաբան վարդապետներովն  
հանդերձ իրաւունք ունին քուէարկու-  
թեան մասնակցելու , թէև հեռի ըլլան  
առաջնորդանիստ քաղաքէն :

Ընդունիւն  
Եկեղեցական անդամոց

11. Եթէ առաջնորդանիստ քաղաքին  
մէջ մէկ Եկեղեցի կայ , և նոյն քաղա-  
քին մօտ կէս աւուր միջոցով գիւղ կամ  
քաղաք չկայ , նոյն քաղաքէն ընտրելի  
Գաւառական Ընդհանուր ժողովոյ ան-  
դամները՝ նոյն Եկեղեցւոյ ժողովոդեան-  
կողմէն կ'ընտրուին :

Եթէ նոյն քաղաքին մէջ մէկէն աւել-  
լի Եկեղեցի կայ , բայց ժողովուրդը միայն  
մէկ Եկեղեցւոյ սեպհական է , և միւս  
ները սեպհական ժողովուրդ չունին ,

գարձեալ նոյն եկեղեցւոյ ժողովուրդն է  
ընտրողը :

Իսկ եթէ առաջնորդանիստ քաղաքին  
մէջ մէկէն աւելի եկեղեցի կայ և իւրա  
քանչիւր եկեղեցի իրեն օեպհական ժոշ  
զովուրդ ունի . պէտք է որ առաջնոր  
դանիստ քաղաքէն ընտրելիք բաշխուին  
նոյն եկեղեցեաց վրայ, անոնց իւրաքանչ  
չիւրին ժողովրդեան թուոյն համեմատ :

Եւ եթէ առաջնորդանիստ քաղաքը  
կէս աւուր միջոց հեռաւորութիւն ու  
նեցող գիւղ կամ քաղաք ունի իր մօտ,  
ան տաեն ընարելիք՝ քաղաքին և նոյն  
գիւղերուն բնակչաց թուոյն համեմատ  
սիտի բաշխուին քաղաքին և գիւղե  
րուն եկեղեցեաց վրայ :

Եկեղեցի չունեցող գիւղ մը իրեն ա  
մենէն աւելի մօտ զիւղին կամ քաղա  
քին եկեղեցիին հետ բնականաբար միա  
ցեալ կը համարուի, և անոր հետ պի  
տի մասնակցի ընարութեան :

12° Խրաքանչիւր եկեղեցւոյ աւա  
դերէցը կամ ուրիշ եկեղեցական մը նոյն  
եկեղեցւոյ թաղական կամ Եկեղեցական  
պաշտօնեաներուն հետ ընարովական ժոշ  
զով կը կազմէ, նոյն եկեղեցւոյ ժողովը:

Դէն 3—4 արժանաւոր անձինք հետ  
առնելով, և անոնց հետ խորհրդակցու  
թեամբ կիրակի օր մը առաւոտեան ժաշ  
մերդութեան ատեն կը ծանօւցանէ նոյն  
եկեղեցւոյ ժողովրդեան, օր յաջորդ կի  
րակի օրը Գաւառական Ընդհանուր ժո  
ղովոյ անդամոց ընտրութիւնը պիտի ըլ  
լայ, և անոնք որ ընտրող են, կարող են  
մասնակցիկ ընտրութեան, կամ անցանք  
բիրելով իրենց քուէն, և կամ գալիք և  
նամակա զրկելով. ընտրողութեան և  
ընտրելութեան հանգամանքներն ալ պի-  
տի բացատրէ :

(Եթէ զիւրութիւն ունին, պէտք է ընտ  
րողաց և ընտրելեաց ցանկեր պատրաստել,  
և եկեղեցւոյ բակը կախել . կամ թէ՝ «յաջորդ կի-  
րակի առաւոտեան ժամերգութեանէն ետքը  
քուէտրկութիւն պիտի ըլլայ Գաւառական  
Ընդհանուր ժողովոյ անդամոց ընտրութեան  
համար, ուստի ոուը Եկեղեցւոյ ժողովր-  
դէն անոնք որ ընտրութեան իրաւունք ու-  
նին, այսինքն 23 տարեկանէն վեր են և  
Տէրութեան տուրք կուտան, կը հրանիր-  
ուին գալ կիրակի՝ յետ աւարտման եկեղեց-  
ւոյ ներկայ զանուիլ և իրենց ընկէն ան-  
ձամուր տալ . և ներկայ զանուել չկրցու  
անամակաւ կրնաց զրկել իր քուէն):

13° Յաջորդ կիրակի առաւօտ սուրբ Եկեղեցւոյ ժամերգութեան ատեն դարձեալ աւագերէցը կամ ուրիշ Եկեղեցական մը՝ նոյն օրը յետ աւարտման ժամերգութեան՝ քուէարկութիւն ըլլալիքը կը ծանուցանէ :

Յետ աւարտման ժամերգութեան՝ աւագերէցը կամ անոր տեղ ուրիշ Եկեղեցական մը Ընտրողական ժողովը կազմելով, տուփ մը կամ մնտուկ մը կը դնեն մէջ տեղ. նախ նոյն մնտուկին պարապ ըլլալը կը քննեն. յետոյ կ'սկսին քուէ բերողներէն քուէներն ընդունիլ կարդաւ:

Ով որ անձամբ քուէ կուտայ, իր անունը կ'ստորագրէ որոշեալ թղթի մը վրայ, որուն ճակատը նշանակուած պիտի ըլլայ ինչ բանի համար քուէարկութիւն ըլլալը. իսկ անոնք որ գիր չգիտեն՝ իշխնց հաճութեամբը անունին արձանագրել կուտան աւագերէցին կամ ուրիշ մէկուն, որ Ընտրողական ժողովոյ մէջէն է, կամ անոր հաճութեամբը հոն նստած :

Երբ նամակաւ քուէ դայ, Ընտրողական ժողովը կը բանայ նամակը, և

կը քննէ դրկողին ստորագրութիւնը կամ կնիքը թէ բուն տիրո՞ջն է, յետոյ անոր քուէն(առանց բանալու) մնտուկը կը կնետէ:

Քուէ բերուած կամ դրկուած միջոցին Ընտրողական ժողովոյ պարտքն է քննել թէ, քուէ բերող կամ դրկողը ընտրողը լուս իրաւունքն ունի<sup>o</sup>, այսինքն 25 տարեկանէն վեր է և Տէրութեան տուրք կուտայ. կամ թէ ծանուցեալ յիշար և ազգային կամ կառավարութեան դործոց մէջ քրէական յանցանօք դատապարտեալ մէկը ըլլայ:

14°. Քուէներն ընդունելէն ետքը, որոշեալ ժամուն կ'սկսին քուէ համարը:

Նախ՝ մնտուկին մէջ որչափ քուէ ըլլալը կը համբեն. յետոյ ստորագրեալ և արձանագրեալ անուները և նամակները կը համբեն. այս երկուքը իրարուհաւասար պիտի դան, որ կասկածելի չըլլայ քուէարկութիւնը:

Քուէ համարի դործողութիւնը կ'սկսի. աւագերէցը կամ ուրիշ մը մէկիկ մէկիկ քուէները մնտուկէն կը հանէ և կը կարդայ. գրագիր մ'ալ կարգացուած անունները կը գրէ, և մէկ անուն մը քաշի անդամ որ կարդացուի, այնչափ ան-

Ք տամ խոջ ( + ) նշան մը կտամ թուանիշան  
կը դնէ այն անուան առջեւ :

Քուէթղթին մէջ եթէ ուզուած թիւ  
ւէն աւելի անուն գրուած ըլլայ , աւել  
ին չ'կարդացուիր . մինչեւ որոշեալ թիւը  
կարդալու և ընդունելու է , անկէ ան  
դին գրուածներն անընդ ունելի են :

Քուէթղթին մէջ եթէ ուզուածին  
չափ անուն գրուած չըլլայ , ընդունելի  
է , գրուածները պիտի կարդացուին :

Քուէարկութեան և քուէհամարի  
գործողութիւնները հրապարակաւ կ'ըլ-  
լան , և ժողովուրդէն ուզողը կընայ ներ-  
կայ գտնուիլ :

15° Քուէհամարի գործողութենէնյեւ-  
տոյ ամենէն շատ քուէ ստացող անձանց  
անունները կը գրուին կարդաւ , և քը-  
ւէարկուաց թուցն կէսէն աւելին ստա-  
ցողը ընտրեալ կը համարուի . օրինակի  
համար եթէ 100 քուէարկու ըլլայ , 51 ,  
52 , 53 , և այլն քուէ ստացողը և աւելի  
թիւ ստացողները ամենքն ալ ընտրեալ  
են . իսկ 50 , 49 , 48 , և այլն թիւ ստացողը  
և հետևաբար ասկէ վար թիւ ստացող-  
ները ընտրեալ չեն :

Երկրորդ անգամ քուէարկութեան

աղիտի հրաւիրուի ժողովուրդը ճիշդ ան-  
ջինին նման , 8 օր առաջ ծանուցանեւ-  
լով և 8 օրէն յետոյ քուէարկութիւն ը-  
նելով , (այս 8 աւուր միջոցը կընայ նուա-  
զիլ 1 , 2 կամ 3 օրի , եթէ այսչափ կարճ  
միջոցի մէջ կարելի ըլլայ քուէարկու ժո-  
ղովրդեան ծանուցանել երկրորդ ան-  
դամ ըլլալիք քուէարկութիւնը) . բայց  
այս անգամ քուէ տուողները որոշեալ  
անուանց վրայ պիտի տան . օրինակի  
համար քանի ընտրելի ետ մնացած են ,  
նոյն թուցն կը կնապատիկը կարգաւ պի-  
տի առնուեին ընտրեալներէն անմիջապէս  
ետքը եկող առաւել քուէ ստացող ու-  
նուններէն , և այս ցանկին վրայ քուէ  
ովկուի տրուի :

Եթէ եկեղեցւոյ մը ժողովուրդը միակամ  
այս երկրորդ քուէարկութիւնը չուզէ , և բը-  
նաւ մէջերնին ալ բողոքոյ չըլլայ , համեմա-  
տաբար առաւել քուէ առնողներէն կ'ընտրեն  
մնացեալ անգամները :

Ընտրական գործողութիւնները ա-  
ւարաելէն յետոյ , ներկայ գտնուող ընտ-  
րողական ժողովը տեղեկադիրը կը շնէ ,  
որուն մէջ պիտի ծանուցանէ 8 օր առաջ  
քուէարկութեան ծանուցում ըլլալը , 8  
որ ետքը ժամ այս ինչն քուէներն ըն-

Կունիլը, քանի հատ անձամբ բնրուրը  
և քանի հատ նամակաւ, և ժամը այս  
իւնին քուէ համարն ըլլալը, և քուէ ից  
արդիւնքն ինչ ըլլալը. և ոյն տեղեկա-  
գերը ստորագրելով կը զրկէ առ Առաջ-  
նորդն կամ փոխանորդն :

16° Այսպէս պիտի ընտրեն նաև թե-  
մերը իւնին ինկած դաւառական ժողովոյ  
անդամները : Միայն թէ երբ մէկ,  
երկու կամ երեք ևսցին դիւղ միասին  
մէկ անձ ընտրելու հրաւիրուին, ամէնը  
մէկտեղ կուղան մէկ զիւղին մէջ ընտ-  
րութիւն ընելու, թէ որ մօտ են իրա-  
րու . խակ թէ որ հեռու են իրարմէ, ա-  
մէնքը զատ զատ քուէարկութիւն և քը-  
ւէ համար կ'ընեն . և արդիւնքը յետոյ ի-  
րենց մէջ կը միացնեն և տեղեկագրով կը  
զրկեն առ Առաջնորդն կամ փոխանորդն :

17° Երբ Առաջնորդը տեսնէ որ ընա-  
րութիւնները մեծ մասամբ կատարուած  
են, և մնացեալներն ալ հետ զհետէ կա-  
տարուելու վրայ են, հրաւէը կ'ընէ գա-  
ւառական ժողովոյ ընտրեալ անդամոց, և  
ընտրելոց մեծադոյն մասին ներկայու-  
թեան ատեանը կը բանայ, նախ Գործա-  
դիր յանձնաժողովոյ կողմէն պատրաս-

տեալ ընարութեան տեղեկագիրները կը  
կարգացուին, և անոնց օրինաւորութիւ-  
նը հասպատուելին եաքը, ըստ օրինի  
գաւառական ժողովի իր դիւանը կը  
կազմէ, մէկ ատեանապետէ և մէկ ատե-  
նագպէրէ, և ի հարկին ասոնց ալ մէկ կամ  
երկու փոխանորդներ տալով :

18° Այս ամեն գործողութիւնները  
գաւառական ժողովոյ դիւանն ի դիր  
առնելով կը զրկէ առ կեգրոնական վար-  
չութիւնն, որ օրինաւորութիւնը ստու-  
գելին եաքը կը վարերացնէ, և Սրբա-  
զան Պատրիարքն ալ յասուկ կոնդա-  
կաւ կը ծանուցանէ նոյն ընարութիւնը  
այն վիճակին ժողովրդոց :

Բ.

Պ Ա Շ Տ Օ Ն

Պ Ա Ի Ա Ռ Ա Կ Ա Ն Ը Ն Դ Հ Յ Ա Վ Ո Յ Ց

1° Գաւառական ընդհանուր ժողո-  
վոյ պաշտօնն է՝

Ա. Ընտրել իր գաւառին վարչու-

թեան կրօնական և Քաղաքական ժողովները . ընտրել իր դաւառին Առաջնորդը . և այս ընտրութիւնները կատարելուն պէս՝ ստորագրեալ համբագրով ներկայացնել կեդ բոնական վարչութեան ի Քաւերացումն :

Բ . Հակել Առաջնորդին և Գաւառական վարչութեան վրայ, երառնալ անհամաձայնութիւնը, եթէասոնց մէջ ծագի :

Գ . Որոշեալ ժամանակի մէջ համար պահանջել իր Գաւառական վարչութեանէն :

Դ . Գաւառական ազգային մնտուկին հաշիւը քննել, և յետագայ տարուան մէջ ըլլալիք ծախքը որոշել :

Ե . Գաւառական ազգային մնտուկին համար իր գաւառի ժողովրդէն առնելիք տուրքը որոշել :

Զ . Լուծել այն խնդիրները, որ Գաւառական վարչութիւնը իր ձեռնհասութեանն վեր համարելով, ընդհանուր ժողովը կը հրաւիրէ :

Է . Ազգային Սահմանադրութեան և Կեդրոնական վարչութեանէն սահմանեալ օրինաց և հրահանգաց անթերի գործադրութեանը հսկել :

2 . Գաւառական ժողովով պաշտամբ 10 տարի կը տեէ, և երկու տարին անշամ մը մէկ հինգերրորդ մասը կը նորոգուի :

Առաջնին անդամին ընդհանուր վիճակաւ կ'որոշուի այս մասնակի փոփոխութիւնը, ըստ օրինակի կեդրոնական երեսափոխանական ժողովոյ :

3 . Գաւառական ժողովը սովորաբար ամէն երկու տարին կը բացուի իր վարչութեանէն համարառութեան համար գարնանամուտին կամ յարմար եղած ժամանակին, և ուրիշ անգամ ի ուահանջել հարկին :

4 . Առաջնորդը կը գումարէ Գաւառական ժողովը :

Սովորականէն դատ Գաւառական ժողովը կը գումարի Առաջնորդին կամօքը, կրօնական և Քաղաքական ժողովոյ մէկուն համահաճութեամբը, կամ Գաւառական ժողովոյ անգամոյ մեծագոյն մասին ինդրանօքը, որ յատուկ համարագրով մը կը պահանջուի :

Գ.

### ԳԱԻԱՌԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ԿՐՈՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԸ

1° Գաւառական կրօնական ժողովը  
կը բաղկանայ Յ էն մինչեւ 7 եկեղեցա-  
կաններէ :

Ուր որ հինգ եկեղեցական չգտնուի,  
երեքով կը կազմուի կրօնական ժողովը :

2° Գաւառական կրօնական ժողովը  
պաշտօնն է :

Ա. Գաւառին ազդային կրօնական  
գործոց ընդհանուր տեսչութիւնը :

Բ. Գաւառին մէջ կրօնական դդա-  
ցումը զարդացնել :

Գ. Հայաստանեայց եկեղեցւոյ դա-  
ւանութիւնն և աւանդութիւնքն ան-  
խախտ պահել :

Դ. Եկեղեցականաց վրայ հսկել :

Ե. Գաւառին ազդային վարժարանաց  
այցելութիւն ընելով՝ կամ այցելու կար-  
գելով՝ Քրիստոնէական վարդապետու-  
թեան ուսուցման վրայ հսկողութիւնը  
նել, դասատուներն ընտրել, և քննու-  
թիւններն ընել :

Զ. Արժանաւոր և բանիբուն քահա-  
նայներ հասցնել :

3° Կրօնական ժողովը ամեն աւեսակ  
տեղեկագիրները միշտ անգամոց մեծա-  
գոյն մասին կողմէն ստորագրեալ պիտի  
ըլլան :

4° Մինչև որ եկեղեցւոյ մը քահա-  
նայներն ու թաղական խորհուրդը նոր  
քահանայ ձեռնադրել տալու կարեւորու-  
թիւնը չտեսնեն և ստորագրեալ տեղե-  
կագրով գաւառական կրօնական ժողո-  
վոյ ինդիր չընեն, և ընծայացուին ար-  
ժանաւորութիւնը չիհաստատուի, ձեռ-  
նադրութեան հրաման չտրուիր :


5° Գաւառական Քաղաքական ժողո-  
վը կը բաղկանայ Յ էն մինչեւ 7 աշխար-  
հականներէ :

6° Գաւառական Քաղաքական ժողո-  
վոյ պաշտօնն է :

Ա. Գաւառին ազդային քաղաքական  
գործոց ընդհանուր տեսչութիւնը :

Բ. Գաւառին ազդայնոց բարեկեցու-  
թեանը և անդուրութեանը հոդ տանիլը

7° Ազգային գործադրութեանը որու-



ուած արքունի տուրքը արդարութեամբ  
բաշխել և հաւաքել:

Դ. Իր աեսչութեան տակ գտնուող  
Խորհրդոց կողմէն մատուցուած ազգօ-  
դուտ առաջարկութիւնները ուշադրու-  
թեամբ քննել, և անոնց կարերութիւ-  
նը յատնուելչն ետքը՝ հաստատել կամ  
գործադրութեան արգելքները բառ-  
նալու ջանք ընել:

Ե. Փաղաքական ժողովը ինք կը տը-  
նօրինէ թէ Տեղական կառավարութեան  
և թէ Կեդրոնական վարչութեան և թէ  
իր առաջնորդական վիճակին մէջ զըտ-  
նուած Թաղական խորհրդոց հետ յա-  
րաբերութեան վերաբերեալ և ուրիշ ի-  
րեն եկած գործերը. Ուսումնական և  
Տնտեսական և Թաղական գործերէն  
զատ, որոնք սեպհական Խորհրդոյն կը  
յանձնէ. և մինչև որ Խորհրդոյն կար-  
ծիքը չաւնու, չկրնար գործադրու-  
թեան ձեռնարկել:

Եւ թէպէտ կրնայ իրաւացի պատ-  
ճառներով հերքել մէկ Խորհրդոյ ըրած  
որոշումը, բայց ինքնին ուրիշ անօրէ-  
նութիւն չկրնար ընել նոյն նիւթին վը-  
բայ, և կը պարտաւորի գարձեալ նոյն

Խորհրդոյն յանձնել գործը:

8. Փաղաքական ժողովը չկրնար նաև  
փոխել կամ լուծել թէ իր ընտրած տե-  
սուչ խորհուրդներէն և թէ Թաղական  
խորհուրդներէն մէկը, քանի որ չտես-  
նէ զայն Սահմանադրութեան հիմնական  
սկզբանց հակառակ ընթացքի մէջ: Բայց  
երբ տեսնէ անոնց մէկը այսպիսի ըն-  
թացքի մէջ, առաջին անգամին բա-  
ցատրութիւն կուզէ նոյն Խորհրդէն.  
Երկրորդ անգամին՝ անոր գրով աղդա-  
րաբութիւններ ընելով ի կանոնապահու-  
թիւն կը հրաւիրէ, իսկ երրորդին՝ զայն  
կը լուծէ. և եթէ Ուսումնական կամ  
Տնտեսական խորհուրդներէն մէկն է,  
ինք նորը կ'ընտրէ, և եթէ Թաղական  
խորհուրդներէն մէկն է, առժամանակ  
եայ Թաղական խորհուրդ մը կը կարգէ  
և նոր ընտրութեան հրահանդը ի միա-  
սին կը զրկէ: Միայն թէ այս մասին ու-  
նեցած պատճառները պիտի բացատրէ  
դաւառական ընդհանուր ժողովոյ ներ-  
կայացնելու երկամեայ տեղեկադրին մէջ:

9. Փաղաքական ժողովը գաղտնի  
քուէարկութեամբ և քուէից բացարձակ  
առաւելութեամբ կ'ընտրէ Ազգին կող-

մանէ առաջնորդանիստ քաղաքին կառավարութեան ժողովոց անդամակից ըլլալու անձինքը , պէտք եղած թուղն համեմատ . և Առաջնորդին կամ անոր բացակայութեանը ֆոխանորդին միջոցաւ Տեղական կառավարութեան կը ներկայացնէ , և մէկ օրինակն ալ կեդրոնական վարչութեան կը զբկէ :

Թեմերուն մէջ՝ որ որ պէտք կայ , սոյն ընտրութիւնը Թաղական խորհուրդք կ'ընեն :

40° Գաւառական Խառն ժողովին կը պատկանի ընտանեկան յարաբերութեանց վերաբերեալ դատերը քննել և վճռել , և ազդայնոց մէջ ծագած վէճերը խաղաղել :

41° Գաւառական կրօնական ժողովը կրօնական խնդրոց համար կեդրոնական վարչութեան կրօնական ժողովին հետ , և Գաւառական Քաղաքական ժողովն ալ քաղաքական խնդրոց համար կեդրոնական վարչութեան Քաղաքական ժողովին հետ , նոյնպէս Խառն խնդրոց համար Գաւառական Խառն ժողովը

կեդրոնական վարչութեան Խառն ժողովոց հետ յարաբերութիւն ունին , և ի հարկին կեդրոնական վարչութեան կը դիմեն :

12° Գաւառական վարչութիւնը իր դաւառին աղդային հանրական և անհատական խնդրոց համար տեղական կառավարութեան հետ յարաբերութիւն ունի . բայց Բ . Դրան դիմելու հարկին մէջ կեդրոնական վարչութեան կը դիմէ :

Եթէ առաջնորդական վիճակի մը մէջ դտնուի քաղաք կամ դիւդ , որ քաղաքականապէս ուրիշ առաջնորդական վիճակին տեղական կառավարութեան ներքեւ ըլլան , երկու Գաւառական վարչութիւնք այս մասին իրարու հետ յարաբերութիւն կ'ունենան :

43° Գաւառական վարչութիւնը՝ յարաբերութեանց համար օրինաւոր դիւնատուն պիտի ունենայ , և Տեղական կառավարութեան քով ալ Քափու քէհեասի :

44° Կրօնական և քաղաքական ժողովոց պաշտօնը Զ տարի կը տեսէ , և վերընտրելի չեն : Բայց եթէ կրօնական

Ժողովոյ համար բաւական թուով եկեց  
ղեցական չգտնուի, նախորդ եկեղեցա-  
կան հայրերը վերընտրելի կրնան ըլլալ:

13. Գրաւառական վարչութեան կը-  
րօնական և քաղաքական ժողովներն ի-  
րենց երկամեայ համարատուութեան  
տեղեկագիրը, հանդերձ գաւառական  
Ռւսումնական և Ցնտեսական խորհրդոց  
տեղեկագրերով, երբ ներկայացնեն դա-  
ւառական Ցնդհանուր ժողովյ, անոնց  
վաւերացեալ մէկ օրինակն ալ պիտի  
զրկեն առ կեդրոնական վարչութիւնն:

### ¶.

### ԳԱԻԱՌԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ԹԻՍԹԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

1. Գրաւառական քաղաքական ժողո-  
վը կ'ընտրէ Ռւսումնական խորհրդութը Յ  
էն մինչև Յ ուսումնական և ուսումնա-  
սէր անձերէ, և այս ընտրութիւնը կը  
ծանուցանէ կեդրոնական վարչութեան  
Ռւսումնական խորհրդոյ, որպէս զի կա-  
րենայ անոր հետ յարաբերութիւն ու-

նենալ իր պաշտօնին վերաբերեալ խընդ-  
րոց վրայ:

2. Գրաւառական Ռւսումնական խոր-  
հըրդոյ պաշտօնն է,

3. Դաստիարակութիւնը ընդհանրա-  
ցընել գաւառին ամեն կարգի ազգոյ-  
նոց մէջ:

4. Մանկանց և աղջկանց հաւասար  
ուսուցանել իրենց կրօնքը, լեզուն և  
պատմութիւնը և այս կարեւոր ուսումնեց:

5. Գրաւառին վարժարանաց բարե-  
կարգութեանը հսկել, ըստ հրահանգի  
կեդրոնական վարչութեան:

6. Վարժարան չունեցող գիւղերուն  
մէջ վարժարան բանալ տալ:

7. Գրաւառակութեան ընդհանրա-  
նալուն համար կազմուած ազգօգուտ  
ընկերութիւնները քաջալերել և անոնց  
ձեռնատու ըլլալ:

8. Գրաւառին մէջ գտնուող գառ-  
տիարակաց կացութիւնը լաւցնելու և  
ապադայն անդորրելու ինսամ տանիլ:

9. Գրաւառին թէմերուն մէջ նա-  
խակիթութեան յաջողակ դաստիարակ-  
ներ հասցնելու ջանք և փոյթ ունենալ:

10. Գրաւառական Ռւսումնական խոր-

Հուրդը կը հսկէ այն վանօրէից ուսումնական ընթացքին և վիճակին վրայ, ու ընդ մասնաւոր մատակարարութիւնը միաբանութեան՝ և ընդհանուր տեսչութիւնը կեդրոնական վարչութեան վանօրէից խորհրդոյն կը վերաբերի. բայց երբէք չկմնար միջամտել, այլ եթէ դիտողութիւն ունենայ, կ'ուղղէ առ գաւառական Քաղաքական ժողով, և անոյ միջոցաւ առ կեդրոնական վարչութեան Վանօրէից խորհուրդն, որ սղաաշաճը կը տնօրինէ:

Ա. Գաւառական Ուսումնական խորհուրդը որոշեալ ժամանակի մէջ և ի հարկին, համար կը պահանջէ գաւառին մէջ գտնուած թաղտկան խորհուրդներէն, իրենց վարժարանաց վիճակին և ընթացքին վրայ, և իր տեղեկագրովը կը հաղորդէ Գաւառական Քաղաքական ժողովին:

Յ. Քաղաքական ժողովը կ'ընտրէ Տնտեսական խորհուրդը 3 էն մինչև 5 տնտեսագէտ և հաշուագէտ անձերէ, և այս ընտրութիւնը կը ծանուցանէ կեդրոնական վարչութեան Տնտեսական

խորհրդոյ, որպէս զի կարենայ անոր հետ յարաբերութիւն ունենալ իր պաշտօնին վերաբերեալ խնդրոյ վրայ:

Ե. Գաւառական Տնտեսական խորհրդոյ պաշտօնն է,

Ա. Գաւառական մէջ գտնուած ազգային բոլոր հաստատութեանց և անոնց կալուածներուն մատակարարութեան ընդհանուր տեսչութիւնն ընել, անոնց պայծառութեանն և ապահովութեանն անխոնջ հսկել և հոդ տանիլ:

Բ. Այս ազգային հաստատութեանց և կալուածոց կալուածագրերուն օրինակը կեդրոնական վարչութեան Տնտեսական խորհրդոյ հաղորդել:

Գ. Գաւառական մէջ ազգային կալուածոյ կանումն և վաճառումն իր հաւանութեամբը որոշել, և Գաւառական Քաղաքական ժողովը հաճութեամբը և Առաջնորդի կնքով հաստատել տալ:

Ասհմանադրապէս Թ-Ա-Ն-Վ-Հ-Լ-Ի-Ռ- ըսուած բանը Հայոց ազգին համար վերցուած ըլլալով, նոյն պաշտօնը գաւառին մէջ Գաւառական Տնտեսական խորհուրդը կը վարէ:

Ազգային սեպհականութեան վերա-

բերեալ ամենայն գնումն և վաճառում  
մըն և գրամական փոխառութիւն ըստ  
օրինի կանխաւ պիտի ծանուցուի կեդ-  
րոնական վարչութեան Տնտեսական խոր-  
հըրդոյ :

Գաւառական Տնտեսական խորհուր-  
դը և Քաղաքական ժողովը ատիպողա-  
կան պարագայի մէջ որ և է գնումն կըր-  
նայ ընել, յետոյ կեդրոնական Տնտեսա-  
կան խորհրդոյ ծանուցանելու պարտա-  
ւորութեամբ . բայց որ և է վաճառում  
և փոխառութիւն չկրնար ընել, առանց  
կանխաւ ծանուցանելու կեդրոնական  
Տնտեսական խորհրդոյ և առանց անոր  
հաւանութիւնն առնելու :

Դ. Հսկել գաւառին մէջ ազդային որ  
և է չինութեանց կամ վերանորոգու-  
թեանց, որոնց չկրնար ձեռնարկութիւն-  
ուանց գիտութեան Գաւառական Տըն-  
տեսական խորհրդոյ, և հաճութեան  
Գաւառական Քաղաքական ժողովյ :

Ե. Գաւառական քաղաքին մէջ  
դժոնուած Հիւանդանոյին տեսչութիւնն  
ընել, կամ իր կողմէն յատուկ Հոգա-  
բարձութեան մը յանձնել :

Զ. Կտակաց անօրէնութիւն ընել,

իսմ իր կողմէն յատուկ Հոգաբարձու-  
թեան մը յանձնել, և այս մասին ելք-  
դիւ գործադրութեան հսկել ըստ հը-  
րահանդի կեդրոնական վարչութեան :

Լ. Գաւառական անտուկին ելու-  
մուտքը անտեսել, որոշեալ ծախքելն  
ընել և եկամուտները հաւաքել : Առանց  
Գաւառական Քաղաքական ժողովյ ո-  
րոշման նոր ծախք չընել :

Գ. Գաւառական անտուկին մուտքն են՝  
Գաւառին ընդհանուր տուրքը . Առաջ-  
նորդական հասոյթք, պաղի, նշան-  
տուք, հըրամանի . և առանց մասնաւոր  
տեղ մը որոշելու՝ գաւառին անուանը  
եղած կտակ կամ նուէր : Ելքն են, Ա-  
ռաջնորդական թոշակ, կեդրոնական  
անտուկին յատկացեալ տարեկան տուր-  
քը (մուգաթա), Դիւանատան ծախք, և  
կարօտեալ թաղերու նպաստ և զանա-  
զան ուրիշ պատահական ծախք :

Դ. Գաւառական Տնտեսական խոր-  
հութը կը հսկէ այն վանօրէից սեպհա-  
կանութեանց և կալուածոց և այլ նիւ-  
թական վիճակին վրայ, որոնց մասնաւոր  
մատակարարութիւնը միաբանութեան,

և ընդհանուր տեսչութիւնը կեղրոնաշկան վարչութեան վանօրէից խորհրդոյն կը վերաբերի . բայց երբէք չկընար միջամտել , այլ եթէ դիտողութիւն ունենայ , կ'ուզգէ առ գաւառական բաղաքական ժողով , և անոր միջոցաւ առ կեղրոնական վարչութեան վանօրէից խորհրդոյն , որ պատշաճը կը անօրինէ :

Գաւառին մէջ գտնուած այն վանքերը՝ որ յատուկ միաբանութիւն չունին և չեն կրնար ունենալ , ասոնք ուղղակի գաւառական ջնտեսական խորհրդոյ իրաւասութեան ներքեւ են . և անոր կողմէ կարգեալ , և գաւառական բաղաքական ժողովէն հաստատեալ տեսչի մը միջոցաւ կը մատակարարուին և հասոյթը այն դիւզօրէից եկեղեցւոյ և վարժարանի ծախուց կը յատկանայ , ուրոնց ժողովրդեան պտղիի արդիւնքը յիշեալ վանքը կը վայելէ : Այս տեսակ վանօրէից տնօրէնութեանը վերաբերեալ խորհրդոյները կեղրոնական վարչութեան վանօրէից խորհրդոյն հաւանութեամբը ի գործ կը դրուին :

8. Ջնտեսական խորհրդոյը որոշեալ ժամանակի մէջ և ի հարկին , համար կը

պահանջէ զաւառին մէջ զ տնուած թաշղական խորհրդութեան , իրենց տնտեսական և ելումտից գործոց վրայ . և իր աեղեկադրուիլը կը հաղորդէ գաւառական բաղաքական ժողովին :

9° Ուսումնական և ջնտեսական խորհրդոց պաշտօնը 2 տարի կը տեէ , և ամեն երկու տարին անդամ մը կիսուակէս կը նորոգուին , և վերընտրելի են :

10° Այս գաւառոներուն մէջ՝ որոնք բնակչօք սակաւաթիւ և դրիւք փոքր են , գաւառական բաղաքական ժողովը՝ եթէ կրնայ , ինք կը վարէ Ուսումնական և ջնտեսական խորհրդոց պաշտօնը , բայց կեղրոնական վարչութեան հաւանութիւնը կանխաւ առնելով :

### Ե.

ԳԱՒԱՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

1° Թաղական խորհրդը կը կազմուի այն թաղին կամ գիւղին մէջ , ուր եկե-

վեցի կայ, և նոյն եկեղեցին ալ իրեն  
սեպհական ժողովուրդ ունի :

2°. Խրաքանչիւր թաղական խոր-  
հուրդ իր թաղին ժողովրդեան կողմէ  
կ'ընտրուի դադունի քուէարկութեամբ,   
ըստ հրահանգի ընտրութեան դաւառա-  
կան ընդհանուր ժողովոյ :

3°. Թաղական խորհուրդներն ըստ  
տեղւոյն Յէն մինչև 7 անդամներէ կը  
բաղկանան, և իրենց պաշտօնն է,

Ա. Խրենց թաղին ժողովրդեան աղ-  
գային գողծոց մատակարարութիւնը :

Բ. Եկեղեցոց պայծառութեանը խր-  
նամ տանիլ :

Գ. Մանկանց և աղջկանց դաստիա-  
րակութեանը համար վարժարան ունե-  
նալ և անոնց յառաջադիմութեանը ջանք  
ընել :

Դ. Թաղին աղքատաց խնամ տանիլ :

Ե. Թաղեցւոց մէջ պատահած վէճե-  
րուն քննութիւնն ու խաղաղարու-  
թիւնն ընել :

4°. Թաղական խորհուրդն իր իշխա-  
նութեան ներքեւ զ տնուած վարժարա-  
նաց վրայ Հոգաբարձութիւն կը կարդէ  
Յէն մինչև 5 ուսումնական և ուսումնա-

մէր անձերէ . սոյն Հոգաբարձութիւնը  
վարժարանաց տեսչութիւնը կը վարէ,  
ծախքը հոգալով եկեղեցւոյ սնտուկէն  
յատկացած ամսականաւը և ժողովրդէն  
ըրած գպրոցական հանգանակութեամբը:

Այսպէս աղջկանց վարժարանը Տի-  
կիններէ կաղմեալ խնամակալութեան մը  
կրնայ յանձնել, յար և նման Հոգաբար-  
ձութեան :

Թաղական խորհուրդը ընտրեալ Հո-  
գաբարձութիւնը և խնամակալութիւնը  
կը ծանուցանէ դաւառական Ուսումնա-  
կան խորհրդոյ, որպէս զի անոր հետ  
գպրոցական խնդրոց վրայ յարաբերու-  
թիւն ունենան :

5°. Թաղական խորհրդոյ անօրէնու-  
թեան տակ է եկեղեցւոյ սնտուկը . որոյ  
մուտքն են թաղին ժողովրդեան կողմէն  
տրուած թաղական առուքը, եկեղեցւոյ  
և գպրոցի կալուածոց եկամուտները,  
եկեղեցւոյ հասոյթները, կտակաւ կամ  
ուրիշ կերպիւ եղած նուէրները և այլն :  
Ելքն են եկեղեցւոյ և վարժարանի ծախ-  
քը, գաւառական սնտուկին յատկաց-  
եալ տուրքը, ու աղքատաց տրուելիք  
օդնութիւնները :

6° Անրընտիր թաղական խորհուրդը մը մինչև որ Գաւառական վարչութեան Քաղաքական ժողովէն չի վաւերանայ և Առաջնորդին կոնդակով չի հաստատուի, պաշտօնի չի ձեռնարկեր . այսպէս նաև երբ հրաժարի, իւր հրաժարականը պիտի մատուցանէ Քաղաքական ժողովը, հաշիւն ալ ջնտեսական խորհրդոյ ներկայացնելով :

7° Եթէ Թաղական խորհուրդ մը սահմանեալ ժամանակէն յառաջ հրաժարի, Գաւառական վարչութեան Քաղաքական ժողովը առժամանակեայ խորհուրդ մը կը կարգէ անմիջապէս, և նոր ընտրութեան հրահանգն ալ ի միասին կը դրիէ:

Թաղական խորհուրդ մը երբ հրաժարի կամ լրւծուի, վարժարանաց Հոգաբարձութիւնը կամ Խնամակալութիւնը կը շարունակեն իրենց պաշտօնը, առժամանակեայ և կամ նորընտիր Թաղական խորհրդէն ստանալով եկեղեցւոյ սնտուկէն յատկացեալ ամսականը :

Խակ եթէ Հոգաբարձութիւնը կամ Խնամակալութիւնը հրաժարին կամ լրւծուին, Գաւառական վարչութեան Քաղաքական ժողովը պարտքն է անմիջապէս

առժամանակեայ Հոգաբարձութիւն մը կամ Խնամակալութիւն մը կազմել, եթէ Թաղական խորհուրդը չուզէ կամ չի կը նայ նորն ընտրել անմիջապէս :

8° Թաղական խորհրդոց, ինչպէս նաև Հոգաբարձութեանց և Խնամակալութեանց պաշտօնը 4 տարի կը տեէ, և վերընտրելի են :

## Զ.

### ԱՌԱՋՆՈՐԴ

1° Առաջնորդի ընտրութեան առենիեղընական վարչութիւնն Ազգին մէջ գտնուած բոլոր անպաշտօն և առաջնորդական արժանիք ունեցող եկեղեցականաց ընդհանուր ցուցակը կը հաղորդէ գաւառին :

Գաւառական կրօնական և Քաղաքական ժողովները յիշեալ ցուցակին մէջէն իրենց գաւառին համար ամենէն աւելի յարմարաւոր երեք անձինքը կը զատեն, և այս ընտրելեաց ցանկը կը ներկայացընեն Գաւառական ընդհանուր ժողովոյ :

Ժողովը կ'ընտրէ զԱռաջնորդը գաղտնիք քուէարկութեամբ և բացարձակ առաւելութեամբ քուէից :

Գաւառական կրօնական և Քաղաքական ժողովոց պատրաստած ընտրելեաց ցանկէն դուրս անձի վրայ ալ քուէ կը տրուի, բայց պէտք է որ այն անձին անունը նշանակուած ըլլայ կեդրոնական վարչութեան բնդհանուր ցուցակին մէջ :

Ընտրութիւնը կատարուելէ ետև տեղեկագիրը կը շինուի, զոր Գաւառական ընդհանուր ժողովոյ անդամք կ'ստորագրեն, և տեղւոյն խառն ժողովոյ միջոցաւ Սրբազն Պատրիարքին կ'ուղարկուի :

Կեդրոնական վարչութեան խառն ժողովը սոյն ընտրութեան օրինաւորութիւնը քննելէ և ստուգելէ ետև Պատրիարքական կոնդակաւ կը հաստատէ զԱռաջնորդը, և Բ. Դրան իմաց տալով պաշտօնական հրամանագիրը կ'ընդունի:

Մինչև որ կեդրոնական վարչութեան կողմանէ Առաջնորդին ընտրութեան օրինաւորութիւնը չհաստատուի և չվերանայ, Առաջնորդն եթէ քաղաքին մէջ ալ գտնուի, պաշտօնին չկրնար ձեռնարկել:

2° Առաջնորդը Պատրիարքական ժողովոց նախագահն է, և անոնց գործա-

գիր իշխանութիւնը կը վարէ, և տեղական կառավարութեան հրամանաց գործադրութեան միջնորդն է :

Իր պարտաւորութիւնն է գաւառին մէջ Ազգային Սահմանադրութեան և կեդրոնական վարչութենէն սահմանեալ օրինաց և հրահանգաց անթերի գործադրութեանը հսկել :

3° Առաջնորդն իրեն եկած գործերը որ ժողովոյ և խորհրդոյ կը վերաբերին նէ, այն ժողովոյն և խորհրդոյն կը յանձնէ քննութեան և որոշման համար կրօնական և Քաղաքական ժողովոց մէջ որոշուած գործոց վրայ Առաջնորդին առտեղական կառավարութիւնն մատուցած թագիրները և կամ ուրիշ պաշտօնական գրութիւնները, և թէ առ ազգային կեդրոնական վարչութիւն ուղղեալ գրութիւնները վաւերական չեն կրնար ըլլալ, եթէ որոշեալ ժողովոյն կողմէ ալ կնքեալ կամ ստորագրեալ չ'ըլլան :

Իսկ երբ ստիպողական գործ մը պատահի, որոյ տնօրէնութեանը համար կարելի չըլլայ մինչև ժողովոյն գումարման օրը սպասել, և կամ արտաքոյ կարգի ժողով գումարել, Առաջնորդը կը քնայ պէտք եղածը ինքնին տնօրինել, իր

վրայ առնելով պատասխանառութեաւ  
նը : Բայց պարտաւորեալ է եղելութիւնը  
արձանագրել տալ կանոնաւոր կերպիւ,  
և ո՞ր ժողովոյն կը վերաբերի նէ,  
անոր յաջօրդ նիստին ներկայացնել վա-  
ւերացման համար :

4° Առաջնորդն իր բացակայութեան  
ատեն, իր ազգային ժողովոց մէջ տըր-  
ուած որոշումները պարունակող թուղթը  
դեռ չըստորագրած, կարող է անոնց  
վրայ իր գիտողութիւններն յայտնելով  
ինդիրը կրկին քննութեան յանձնել:  
Իսկ այս վերաքննութեանէն ետքը՝ պար-  
տաւորեալ է նոյն թղթերը ստորագրել,  
եթէ տրուած որոշումը Սահմանադրու-  
թեան տրամադրութեանցը անհամա-  
ձայն չգտնէ :

5° Առաջնորդը կրնայ գաւառին մէջ  
գտնուող և Սահմանադրութեան սկզբ-  
բանցը համեմատ չվարւող եկեղեցական  
մը, վարժապետ մը, եկեղեցւոյ, Վան-  
քի, Դպրոցի կամ Հիւանդանոցի գոր-  
ծակալ մը, պաշտօնէն հանելու առա-  
ջարկութիւն ընել ձեռնհաս ժողովոյն  
կամ խորհրդոյն :

6° Առաջնորդը գաւառական անտու-

կէն իրեն յատկացեալ ամսական կ'ունե-  
նայ, և ինը կը տեսնէ Առաջնորդարա-  
նին ներքին ծախքը :

7° Առաջնորդը իրեն յատուկ փոխա-  
նորդ մը կ'ունենայ, զոր խառն ժողովը  
կ'ընտրէ և Առաջնորդը կը հաստատէ :

8° Առաջնորդը ըստ օրինաց Տէրու-  
թեան, արքունի ժողովոյ անդամ է .  
Հոն գաւառին վերաբերեալ որ և է ազ-  
գային հանրական և անհատական խրնդ-  
րոյ վրայ իր կարծիքը յայտնելէ և հան-  
րագրի վրայ իր ստորագրութիւնը դւ-  
նելէ յառաջ Գաւառական վարչութեան  
հաճութիւնը պիտի առնու . ի բաց առ-  
եալ այն սովորական ինդիրները, որոց  
վերաբերեալ տնօրէնութիւնը արդէն  
Գաւառական վարչութեան կողմէն նը-  
շանակուած կ'ըլլան :

Եթէ արդէն չի նշանակեալ ինդրոյ մը  
համար՝ պատասխանառուութիւնը վրան  
առնելով, կարծիքը և ստորագրութիւ-  
նը տայ, Գաւառական վարչութեան յա-  
ռաջիկայ նիստին պիտի իմացնէ :

Ճիշդ այսպէս պիտի վարուին նաև  
այն Հայ անդամները, որ արքունի ժո-  
ղովոց մէջ կը նստին ի դիմաց Ազգին :

Եթէ Առաջնորդը իր վիճակէն բաշցակայ ըլլայ , Առաջնորդական փոխանորդը կամ տեղապահը կը բազմի Արքունի ժողովոյ մէջ :

Թիեմերուն մէջ տեղական կառավարութեան ժողովոյ անդամ է այն եկեղեցականը , որ տեղւոյն թաղական Խորհրդէն ընտրեալ և գաւառական Քաղաքական ժողովէն վաւերացեալ է այս պաշտօնին համար , զոր կը վարէ յար և նման Առաջնորդին :

9° Առաջնորդը իրաւունք չունի ինքնին լուծել և փոխել Գաւառին Կրօնական և Քաղաքական ժողովները և անոնց վերաբերեալ խորհուրդները : Բայց երբ տեսնէ թէ ասոնցմէ մէկը Սահմանադրութեան սկզբանցը հակառակ ընթացքի մէջ է , առաջին անդամին բացատրութիւն կ'ուղէ այն ժողովէն կամ խորհուրդէն , երկրորդին իմաց կուտայ անոր ապօրինաւոր ընթացքը և ի կանոնապահութիւն կը հրաւիրէ զայն . իսկ երրորդին՝ Գաւառական Ընդհանուր ժողովյն կը դիմէ , եթէ ամբաստանելին կրօնական կամ Քաղաքական ժողովոյն կը դիմէ :

Եթէ Ուսումնական և Տնտեսական և Թաղական խորհուրդներէն մէկն է . և պատճառները ցուցնելով՝ ամբաստանեալ ժողովոյն կամ խորհրդոյն լուծումը կ'առաջարկէ :

Եթէ Առաջնորդը իր գաւառական Ընդհանուր ժողովին դէմ ալ գանգատունենայ , կը դիմէ առ Կեդրոնական վարչութեան խառն ժողովը :

Ե.

### ԱՄԲԱՍՏԱՆՈՒԹԻՒՆ

#### Ա. Ռ. Ա. Զ Ն Ո Ր Դ Ի Վ Ր Ա Ց

1° Առաջնորդը կ'ամբաստանուի Գաւառական Ընդհանուր ժողովէն կամ նոյն Գաւառին կրօնական և Քաղաքական ժողովներէն կամ ասոնցմէ մէկէն : Ամբաստանող կամ բողոքող ժողովը Կեդրոնական վարչութեան կը հարորդէ իր ամբաստանութիւնը կամ բողոքը :

2° Կեդրոնական վարչութիւնը նախքացարութիւն կը պահանջէ առաջնորդէն . և երբ իրաւախոհութեան միջոցները պակսին , ամբաստանութեան նիւթիւն և այլ պարագայլոց նկատմամբ , եթէ ար-

ժան դատէ , առժամանակեայ կը հեռաց ցընէ Առաջնորդը նոյն տեղէն . և Գաւառական վարչութիւնը առաջնորդական տեղապահ մը կը նշանակէ և կեդրոնական վարչութիւնը կը վաւերացնէ : Առաջնորդական թոշակին կէսը կը զըրկուի Առաջնորդին և միւս կէսը Տեղապահին կը յատկանայ :

Իսկ երբ կեդրոնական վարչութիւնը նկատէ որ ամբաստանութիւնը ծանրէ , և ամբաստանողը կամ ամբաստանեալն ալ քննութիւն ընելու վրայ կը պնդէ , գաւառական ընդհանուր ժողով գումարելու և քննութիւն ընելու հրահանդը կուտայ , և ի հարկին իր կողմէն ալ տեսուչ կը զրկէ :

3° Եթէ Առաջնորդն ընդհանուր ժողով չի գումարէ , թէ Գաւառական ընդհանուր ժողովոյ դիւանը , և թէ կրօնական կամ Քաղաքական ժողովոց դիւաններէն մէկն կամ երկուքն ի միասին , և թէ կեդրոնական վարչութենէն նշանակեալ տեսուչը ըստ օրինի կրնան հրաւիրել Գաւառական ընդհանուր ժողովը :

Եթէ Գաւառական ընդհանուր ժողով գումարել անհնար ըլլայ , կեդրոնա-

կան վարչութիւնն իր կողմանէ քննիչներ կը կարգէ , և անոնց միջոցաւ ամբաստանութիւնը կը քննէ , և ըստ այնմ արդարութիւնը կը վճռէ :

4° Գաւառական ընդհանուր ժողովին ներկայացեալ ամբաստանութիւնը քըննելու համար՝ ժողովը իր մէջէն կ'ընտրէ 3 եկեղեցական և 3 աշխարհական խառն Յանձնաժողով մը , (որ իր մէջ բողոքող անձանցմէ մարդ պիտի չունենայ) , և երբ ամբաստանութիւնը հաստատուի , ու Առաջնորդին հրաժարումն անհրաժեշտ դատուի , այս եղելութեանց բովանդակ տեղեկագիրը Գաւառական ընդհանուր ժողովը անդամոց մեծադոյն մասէն ստորագրեալ , կը զրկուի առ կեդրոնական վարչութիւնն :

Սոյն տեղեկագրին մէկ օրինակն ալ նոյնպէս Գաւառական ընդհանուր ժողովոյ մեծագոյն մասէն ստորագրեալ՝ կը մատուցուի Առաջնորդին , և մատուցուած թուականէն մինչև մէկ կամ ըստ հեռաւորութեան տեղւոյն երկու ամիս՝ Առաջնորդն իրաւունք ունի բողքելու կամ իր դիտողութիւնները ներկայացնելու կեդրոնական վարչութեան :

Եթէ Առաջնորդը չի բողոքէ, և ու  
բոշեալ պայմանաժամն անցնի, ինքնին  
իր պաշտօնէն դադարեալ է :

Իսկ եթէ բողոքէ կամ դիտողութիւն  
ներկայացնէ կեդրոնական վարչութեան,  
այն առեն մինչև կեդրոնական վարչու-  
թենէն առնելիք որոշման օրը՝ առաջ-  
նորդական պաշտօնը վարելէ դադար-  
եալ է, բայց իւր անունը Ս. Պատարա-  
գի մէջ յիշատակուելէ դադարած չէ :  
Այս միջոցին առաջնորդական փոխա-  
նորդը կը վարէ առաջնորդական պաշ-  
տօնը :

5° Կեդրոնական վարչութեան Խառն  
ժողովը տեղեկադիրը լսելէն և Առաջ-  
նորդին բողոքը կամ դիտողութիւններն  
առնելէն վերջը, անմիջապէս քննիչներ  
կը զրկէ ի նոյն գաւառ, անոր մերձա-  
կայ վիճակաւորներէն, կամ այլուստ՝ ե-  
կեղեցական և աշխարհական դասէն,  
որ պաշտօն կ'ունենան նոյն գաւառին  
ընդհանուր ժողովը և Առաջնորդին  
ներկայութեանը ամբաստանութեան կէ-  
տերը վերաքննելու :

Եթէ ամբաստանեալ առաջնորդ մը  
եպիսկոպոս է, գնացող եկեղեցական

քննիչին մէկն եպիսկոպոս ըլլալու է :

Նոյնպէս գնացող եկեղեցական քըն-  
նիքը նոյն վիճակին առաջնորդութեան  
ընտրելի չի կրնար ըլլալ այն անդամին  
համար :

Քննչաց ծախքը գաւառական սնտու-  
կին կը վերաբերի :

Քննիչները վերաքննութեան ար-  
դիւնքը կը տեղեկագրեն առ կեդրոնա-  
կան վարչութիւնն :

Կեդրոնական վարչութեան Խառն  
ժողովը նոյն տեղեկագրին վրայ իր վե-  
ճիւը կուտայ, որ եթէ առաջնորդին  
անկմանը կը վերաբերի, կը հաղորդէ  
առ քննիչ պաշտօնեայս և առ դադար-  
եալ առաջնորդն :

6° Պադարեալ Առաջնորդն անմիջա-  
պէս իր վիճակէն կ'ելլայ, կեդրոնական  
վարչութեան նշանակած տեղն երթալու :

Եթէ դադարեալ Առաջնորդը վերա-  
քննութիւն պահանջէ ի կ. Պօլիս, ուղ-  
ղակի պարտաւոր է կ. Պօլիս գալ, և  
վերաքննութեան օրինաւոր փաստերը  
ներկայացնել :

Եթէ միջոց անցնի, և ապա դադար-  
եալ Առաջնորդ մը բողոքէ, անընդունե-

լի պիտի ըլլայ : Այս միջոցը՝ առ առաջ ւելն չորս ամիս է :

Եթէ դադարեալ Առաջնորդ մը ըմբ բոստանայ և վեր ի վայր յուզէ վիճակը, այսպիսին արքունի հրամանաւ կը հանուի իր տեղէն, և որոշեալ տեղ մը կը զրկուի :

Երբ Առաջնորդ մը դադարի իր պաշտօն էն կամ հրաժարի և կամ վախճանի, գաւառական վարչութեան խառն ժողովս անմիջապէս եպիսկոպոս կամ վարդապետ և կամ քահանայ տեղապահ մը կը կարգէ, և յետոյ անոր միջոցաւ կը հրաւիրէ գաւառական Ընդհանուր ժողովը նոր առաջնորդ մ'ընտրելու . այս մասին կեդրոնական վարչութեանէն առած հրահանգին համեմատ :

Մինչև նոր Առաջնորդի մ'ընտրութիւնը եթէ գաւառական վարչութիւնը առաջնորդական տեղապահ մը անմիջապէս չի նըշանակէ, կեդրոնական վարչութիւնը զայն կը կարգէ :

7°. Երբ Առաջնորդի մը վրայ եղած ամբաստանութիւններն ծանր ըլլան, և չի կրնայ արդարանալ . եթէ յանցանքը եկեղեցւոյ դէմ է, առաջնորդական

պաշտօնէն դադարելէն զատ՝ եկեղեցւոյ օրինաց համեմատ ալ կը պատժուի :

Իսկ եթէ Աղքային Սահմանադրութեան և կեդրոնական վարչութեանէն սահմանեալ օրինաց և հրահանգաց դէմ է, իր յանցանացը համեմատ արդէն վարած պաշտօնէն դադարելէն զատ՝ որոշեալ ժամանակ մ'ալ աղքային որ և է պաշտօն վարելէ կը զրկուի :

Եւ եթէ ժողովուրդ հովուելու և անոր օդտին ու յառաջադիմութեան նըպաստելու անքաւական լինելն հաստատուած ըլլայ, առաջնորդական պաշտօն վարելէ բոլորովին զրկուելու վճիռ կ'ընդունի :

8°. Եթէ ի գաւառին կամ ի Պօլիս եղած վերաբննութիւնը գաւառական Ընդհանուր ժողովոյ աննպաստ ըլլայ, և Առաջնորդին ու անոր մէջ համաձայնութիւնն անկարելի, այն ատեն կեդրոնական վարչութիւնը կը լուծէ գաւառական Ընդհանուր ժողովը և անմիջապէս վերակազմել կուտայ :

Եթէ վերակազմեալ գաւառական Ընդհանուր ժողովը դարձեալ իր առաջնորդը չուղելուն վրայ պնդէ, այն ատեն

կեդրոնական վարչութիւնը առժամանակ մի փիճակէն կը հեռացնէ Առաջնորդը : Առաջնորդական թոշակին կէսը Առաջնորդին կը զրկուի :

Ը.

### ՄԻԶԱՄՏՈՒԹԻՒՆ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

1°. Երբ Առաջնորդ մը կամ գաւառական վարչութիւն մը Սահմանադրութեան և կեդրոնական վարչութենէն սահմանեալ օրինաց և հրահանգաց հակառակ ընթացքի մէջ գտնուին, և իրենց պաշտօնն ու պարտաւորութիւնը չի կատարեն, կեդրոնական վարչութիւնն իրաւունք ունի ազդարարութիւն ընել անոնց և բացատրութիւն պահանջել:

Կեդրոնական վարչութիւնն ի հարկին մերձակայ առաջնորդներէն կամ վանականներէն կամ այլուստ՝ եկեղեցական և աշխարհական տեսուչ կը զրկէ հոն :

2°. Եթէ Առաջնորդը կամ գաւառական վարչութիւնը յամառին իրենց ընթացքին մէջ, տեսչին միջոցաւ գաւա-

ռական Ընդհանուր ժողովը կը հրաւիրուի, և կեդրոնական վարչութիւնը կը դադրեցնէ զանոնք իրենց պաշտօնէն ըստ տեղեկադրի գաւառական Ընդհանուր ժողովին :

3°. Այսպիսի պարագայի մէջ եթէ գաւառական Ընդհանուր ժողովն ալ համամիտ գտնուի Առաջնորդին կամ գաւառական վարչութեան, կեդրոնական վարչութիւնը զայն ալ կը լուծէ, և իր կողմէն զրկուած տեսչին միջոցաւ առժամանակեայ վարչութիւն մը կը կազմէ, առաջնորդական տեղապահ մ'ալ կարգելով՝ ցնոր ընտրութիւն գաւառական Ընդհանուր ժողովց :

Կեդրոնական վարչութիւնն այսպէս պիտի վարուի . երբ թէ այսպիսի և թէ ուրիշ պարագայի մէջ գաւառական Ընդհանուր ժողով գումարել տան անհրաժեշտաց իրեն, կամ թէ ժողովը ցըրուած և կամ բնաւ չեղած ըլլայ :

4°. Եթէ Առաջնորդը կամ գաւառական վարչութիւնը և կամ գաւառական Ընդհանուր ժողովը՝ որ կեդրոնական վարչութեան միջոցաւ պաշտօնէ դադրած կամ լուծուած են, Սահմանադրու-

թեան հիմնական ոկղբանց , չայաստան՝  
եայց եկեղեցւոյ վարդապետութեան և  
օրինաց , Ազգային իրաւանց և արտօ-  
նութեանց հակառակ վարուած ըլլան ,  
և ազգային սեփականութեանց ու մա-  
տակարարութեան մէջ նենգութեամբ  
բոնուած , կամ ազգային յառաջադի-  
մութեան արգելք եղած են դիտմամբ  
և գիտութեամբ , վերջապէս Ազգի և  
Եկեղեցւոյ դէմ դիտմամբ մխասակար  
գտնուած ըլլան , վերընտրելի չեն իրենց  
պաշտաման համար . ի բայց առեալ ժո-  
ղովոց այն մասը՝ որ փոքրաթիւ է , և  
բողոքարկու՝ մեծագոյն մասին դէմ :

5°. Իսկ երբ վերընտրելի չըլլալու չափ  
ծանր վիճակ մը չունենան , և ընտրուե-  
լին յետոյ գարձեալ ըստ առաջնոյն շա-  
րունակեն այն ընթացքնին , որոյ հա-  
մար առաջին անգամ պաշտօնէ դադրե-  
ցան կամ լուծուեցան , կեդրոնական  
վարչութիւնը իր Ա. Բ. Գ. ազդարա-  
բութիւններն ընելէ ետքը , կը լուծէ  
զանոնք իրենց պաշտօնէն՝ վերընտրելի  
չըլլալու պայմանաւ :

Տես 104.

ՀՀ Ազգային գրադարան



NL0109880

